ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԷԳԵՅԱՆԻ ՄԵՐՁԱՓՆՅԱ ՇՐՋԱՆՈՒՄ (XIV — XVIII ԴԴ.)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Էգեյան ծովի մերձափնյա գաղթավայրերի առաջացումը կապվում է հայ ժողովրդի դժվարին պատմական ճակատագրի, հայրենի երկրից հարկադրաբար գաղթելու իրողության հետ։ Հայության զանգվածային տեղաշարժերի նոր փուլ սկսվեց Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375 թ.), երբ ժողովրդի բազմությունները ոչ միայն գերեվարվեցին, այլև տեղահանվեցին կամ գաղթեցին Ասիայի ու Եվրոպայի բազմաթիվ երկրներ։ Այս ժամանակաշրջանում և հետագայում հայտնվում են նոր գաղթավայրեր Ղրիմում, Լեհաստանում, Պարսկաստանում, Սև և Միջերկրական ծովերի առափնյա տարածքներում, Թուրքիայի փոքրասիական շրջաններում՝ ընդհուպ մինչև դրանց արևելյան մասը և այլուր։ Հայ գաղթավայրերի տարածումը շարունակվել է դարեր ի վեր, նոր գաղթականությունները համալրել են հները՝ բուն հայրենիքի ապրած սոցիալ-քաղաքական կատակլիզմների հետևանքով։

Էգեյանի ծովամերձ շրջանների (Զմյուռնիա, Մանիսա, Այտին, Գուշատա, Մենեմեն, Գրգաղաճ, Դենիզլի, Նազիլի, Թիրա և այլն) հայ գաղթավայրերի կազմավորման մասին փաստական վկայությունները չեն անցնում XVI դարից այն կողմ։ Զմյուռնիայի հայկական գերեզմանատան ցայժմ հայտնի ամենահին դամբանագիրը թվագրված է 1551 թ.[1]։ Ավելի ուշ՝ 1622 թ. են ավանդված ձեռագիր հիշատակարանները, որ վկայում է գաղթավայրի դերի և նշանակության բարձրացման մասին[2]։

Սակայն Զմյուռնիայում հայ առևտրականների կամ առևտրական գաղութի գոյության փաստերը հայտնի են շատ ավելի հին ժամանակից։ XIII դարի առաջին կեսին ապրանքափոխանակության աշխուժացումը Իկոնիայի ռումի սելջուկյան սուլթանության, Նիկեայի և Տրապիզոնի հունական կայսրությունների միջև՝ կարևոր խթան դարձավ լևանտական առևտրի հետագա զարգացման համար։ XIII դարում, ինչպես նշում է Հ. Մանանդյանը, հայ առևտրականները «ունեին այժմ համաշխարհային կապեր և մշտական հարաբերություններ լևանտական առևտրական կենտրոնների հետ, որտեղ սելջուկյան արշավանքներից հետո գոյացել էին հայկական գաղութներ»[3]։

Ըստ Ա. Ալպոյաճյանի, Զմյուռնիայում հայ գաղթօջախի կազմավորումը տեղի է ունեցել XIII դարի II քառորդին՝ կապված մոնղոլական արշավանքների հետ, որը գաղթերի մեծ հորձանք էր առաջացրել. «Այս գաղթականները,— գրում է նա,— հավանական է, որ մաս մը խուճապահար փախուստի ընթացքին առաջացած է մինչև Փոքր Ասիո արևմտյան ծայրը, Հոնիականի եզերքը՝ Զմյուռնիա, որուն գաղութի հաստատությունը կկարծվի ժամանակակից է Զարմաղան թաթար զորապետին՝ Հայաստանի նվաճման թվականին, այսինքն՝ 1236-ին»[4]։

---

1 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս. հ. Ա, Վիեննա, 1899, էջ 82։

2 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 6332, էջ 513։

3 Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. 3, Երևան, 1952, էջ 166։

4 Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ գաղթականության. հ. 2, Կահիրե, 1955, էջ 543։

ժամանակի իմաստով Ա. Ալպոյաճյանի այս կոնկրետացումը մնում է ապացուցելի, մանավանդ սկզբնաղբյուրները էգեյանի մերձակա տարածքը չեն նշում իբրև գաղթի վերջնական հանգրվան։ Մյուս կողմից, անհրաժեշտ է որոշակիորեն սահմանազատել առևտրական գաղութ և գաղթօջախ հասկացությունները, որոնք որակապես տարբերվում են միմյանցից։ Առևտրական խմբի (կամ խմբերի) հաստատվելը դեռևս չէր նշանակում, որ գաղթօջախ է կազմավորվել։ Խումբը (կամ խմբերը) որպես կանոն, փոքրաթիվ էր և պատահական միավորման բնույթ ուներ։ Այդպիսի համախմբումը կատարվում էր զուտ առևտրի բերումով և նույնքան պատահական էր, որքան տարանջատումը՝ դարձյալ առևտրական գործառնությունների հետևանքով։ Մինչդեռ գաղթօջախը ենթադրում է նույն ազգությանը, լեզվին ու դավանանքին պատկանող շատ ավելի նշանակալի թվաքանակ ունեցող անձանց հանրություն, որը հանգրվանել է ոչ թե տարանցիկ առևտրականի, այլ բուն կեցության, մշտական բնակության անհրաժեշտությամբ, ունենալով իր սոցիալական որոշակի միջավայրը կամ դրա մոդելը[5]։ Միջնադարում հայ գաղթօջախները ոչ քիչ դեպքերում գոյանում էին առևտրական գաղութի հայտնությունից հետո և այս ընդհանրական երևույթի հարաբերությամբ էգեյանի մերձակա տարածքի, մասնավորապես Զմյուռնիայի գաղթօջախը չի առանձնանում։ Նրա սկզբնավորման, ապա և հետագա պատմության շատ դրվագներ ցույց են տալիս, որ այստեղ բնակություն են հաստատել այն շրջանների հայերը, որտեղից նախապես եկել էին իրենց հայրենակից վաճառականները։ Հետևաբար, Զմյուռնիայի հայ գաղթօջախի հաստատման ժամանակը չպետք է նույնացնել առևտրական գաղութի ստեղծման ժամանակի հետ՝ վերջինս նախորդում է գաղթօջախի կազմավորմանը։ Պետք է ընդունել Հ. Քոսյանի կարծիքը, ըստ որի, գաղթօջախի կազմավորումը տեղի է ունեցել XIV դարի վերջին քառորդին, Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո[6], իսկ ինչ վերաբերում է առևտրական գաղութին, ապա այն կարող էր գոյացած լինել XI—XII դդ.՝ սելջուկների ժամանակից ի վեր։

Զմյուռնիայում «վաճառականության և գաղթականության մեջ հաջողակ հայերի» մասին առաջին տեղեկությունը տրվում է 1261 թ. մարտի 13-ի՝ Միքայել Պալեոլոգ կայսեր և ճենովացի առևտրականների միջև կնքված մի դաշնագրի տեքստում (ըստ Բ. Սլարսի)[7]։ Այս ժամանակաշրջանում Զմյուռնիայում կանգառած հայ վաճառականները եկել էին Քուղայից, Նախիջևանից ու Ագուլիսից և ուղղակի կապված էին Ջենովայի ու Վենետիկի վաճառականների հետ[8]։ Նիկեայի հունական կայսրությունը, որի մեջ մտնում էր Զմյուռնիան XIII դարի սկզբին, առևտրի բարենպաստ պայմաններ էր ստեղծել մի կողմից իր տարածքով անցնող (Բրուսա, Ադրամիդա, Ֆիլադելֆիա) և արևելք ձգվող առևտրական ուղիների, և մյուս կողմից իտալացիների հետ առևտրի զարգացման համար։ Նիկեայի կայսրության առևտուրը սելջուկների հետ տարածվում էր էգեյան ծովի առափնյա շրջաններից մինչև առևտրի փոքրասիական կենտրոնները[9]։ Զմյուռնիայում ապաստանած հայ առևտրականները այս ուղիներով կարող էին շրջանառության մեջ դնել փոքրասիական քաղաքներից իրենց տեղափոխած բեռները և առնչություններ ունենալ Զմյուռնիայից դեպի Մարմարա ծովն ընկած հատվածում երթևեկող իտալացի վաճառականների հետ։

---

5 Հ. Ճ. Սիրունին իրավացիորեն ամեն մի համախմբում գաղութ չի համարում։ Նա գաղթօջախը բնութագրող որակական հատկանիշ է դիտում «ազգային դիմագծությունը»՝ լեզուն, ավանդույթները և եկեղեցին (Հ. Ճ. Սիրունի, Պոլիս և իր դերը.—«Էջմիածին», 1964, № 1, էջ 31)։

6 Հ. Քոսյան. նշվ. աշխ., էջ 39։

7 Ատոմ. Իզմիրի ս. Լուսավորչյան հիվանդանոցը.—«Արևելք», 1902, 13 փետրվարի։

8 Ա. Ալպոյաճյան. նշվ. աշխ., էջ 527։

9 В. Гордлевский. Избранные сочинения. Т. I, М., 1960, с. 145.

Եթե XIII դարից հայտնի են Զմյուռնիայում գործող հայ վաճառականներ, ապա XIV դարի առաջին կեսին արդեն տեսնում ենք նաև հայ մտավորականի։ Նկատի ունենք զմյուռնացի Նիկողայոս Արտավազդ Ռաբդասին, այն մաթեմատիկոսին, որին պատկանում է առաջինը քառակուսի արմատ դուրս բերելու պատիվը[10]։ Ն. Ադոնցը կարծում է, որ Արտավազդը (ինչպես և նրան առնչվող մյուս երկու հայերը) պահպանելով իրենց ազգային անունները, դրանով ցույց են տալիս, որ «նոր են եկել Արևելքից և հնաբնակ չեն Բյուզանդիայում»[11]։ Իրողությունը մնում է այն, որ Արտավազդը պահպանել է և՛ հայկական անունը և իր քաղաքի (չի բացառվում՝ ծննդավայրի) հիշատակումը՝ իբրև անվան բաղադրիչ։ Այս փաստը խոսում է այն մասին, որ նշված ժամանակաշրջանի Զմյուռնիայում հանդիպում են նաև ոչ վաճառական հայեր։

Զմյուռնահայ գաղթօջախի սկզբնավորումը կապակցելով Կիլիկիայի հայկական թագավորության վերացման հետ, Սլարսը (այնուհետև՝ Հ. Քոսյանը) որևէ սկզբնաղբյուր չեն նշում (Սլարսը հենվել էր զմյուռնացի մի քանի հնաբնակների և մտավորականների վկայությունների վրա)։ Նրանցից առաջ Հ. Դիմաքսյանը ևս կարծում է, որ զմյուռնահայերը «թերևս Կիլիկիո հայոց թագավորության ժամանակներն հոն գաղթած ըլլան»[12]։ Ընդսմին, Հ. Դիմաքսյանը ևս հենվում է տեղացիների հին ավանդությունների վրա։ Սակայն Կիլիկիայի հայերի գաղթը Զմյուռնիա շատ հավանական է թվում. թագավորության կործանումից հետո (1374), ինչպես գրում է Մ. Չամչյանը, հայ բնակչությունից «բազումք ևս վաղագոյն աճապարեալ՝ խոյս ետուն յաշխարհս հեռաւոր ի կողմանս Փոքրոն և Մեծին Հայոց և յերկիրն Վրաց և Աղուանից և ի սահմանս Յունաց և Պարսից ևս և ի կղզիս ցրուեցան յայլևայլ թագաւորութիւնս քրիստոնէից որոց թիւն եղեւ ըստ ոմանց իբր երեսուն հազար անձանց և ըստ այլոց աւելի յոյժ»[13]։ Զմյուռնահայ գաղթօջախի պատմաբան Սլարսը կոնկրետացնում է գաղթի հանգրվանները՝ այդպիսիք համարելով մասնավորապես Իտալիան, Կիպրոսը, Հռոդոսը և Կրետեն[14]։ Ա. Ալպոյաճյանը Սսից հիշյալ հայ գաղթականների գաղթը վերագրում է 1404-ին. նրա կարծիքով գաղթականների մի մասը անցել էր Եվրոպա՝ Իտալիա, Կիպրոս, իսկ մյուս մասը՝ փոքրասիական քաղաքներ[15]։ Նա վկայակոչում է մի ժամանակագրություն, ըստ որի, Սսի հայերը՝ թվով 30 հազար տուն, 1413 թ. «մտեալ նաւ գնացին ի Ֆռանգս»[16]։ Ավելի վաղ գրած իր հոդվածում Ա. Ալպոյաճյանը, հետևելով Թ. Ճերմակյանին և Ատոմին, գրում է, որ զմյուռնահայ գաղթօջախը կազմավորվել է XI—XII դդ., թերևս ավելի վաղ[17]։ Բայց այս տեսակետը չի բխում փաստական նյութից։ Ատոմը իր կարծիքը կառուցում է XI—XII դդ. գաղթերի ընդհանուր երևույթի վրա, որ համոզիչ չէ։ Ա. Ալպոյաճյանը իր հերթին գրում է. «Վավերական աղբյուրներ և հիշատակարաններ թեև կպակսին, բայց գերեզմանաքարեր և իզմիրցիներու հասած լեզվի ինչ-ինչ երևույթները ցույց կուտան, թե Իզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմեն գաղթած են ԺԱ կամ ԺԲ դարերուն մեջ և կամ ավելի առաջ»[18]։ Սակայն զմյուռնացի հայերի ամենահին դամբանագիրը չի անցնում 1551 թ. այն կողմ։ Ինչ վերաբերում է նրանց բարբառին, ապա պատկանելով «կը»

10 Ն. Ադոնց. Պատմական ուսումնասիրություններ. Փարիզ, 1945, էջ 536։

11 Նույն տեղում, էջ 537։

12 Հ. Դիմաքսյան. Շիթ մ'անունք ի Միջերկրականեն. Կ. Պոլիս, 1878, էջ 328։

13 Մ. Չամչեան. Պատմութիւն Հայոց. Հ. Գ. Երևան, 1984, էջ 359։

14 Հ. Քոսյան. նշվ. աշխ., էջ 31։

15 Ա. Ալպոյաճյան. նշվ. աշխ., էջ 549։

16 Նույն տեղում, էջ 499։

17 Թ. Ճերմակյան. Զմյուռնիա և ազգայինք.—«Հանդես ամսօրյա», 1890, № 4, էջ 83։ Ատոմ. նշվ. աշխ.։ Ա. Ալպոյաճյան. Առաջնորդություն հայոց Իզմիրի.—«Բյուզանդիոն», 1908, 23 ապրիլի։

18 Ա. Ալպոյաճյան. Նույն տեղում։

ճյուղին և «չափազանց նման» լինելով Կ. Պոլսի ու հատկապես Եվդոկիայի բարբառներին[19], այն իրոք պարունակում էր արևելահայերենի տարրեր։ Սակայն խնդիրն այն է, որ այդպիսիք զմյուռնահայերի բարբառը իր մեջ կարող էր ներառնել հետագայում՝ XVII դարում, երբ բազմաթիվ արևելահայեր գաղթեցին Զմյուռնիա։

Թ. Ճերմակյանը հավանական չի համարում Կիլիկիայից հայերի գաղթը Զմյուռնիա՝ 1375—1380-ի կողմերը, փաստարկելով Էգեյանի տարածքների ոչ ապահով վիճակը։ Նրա կարծիքով, եթե այստեղ եկած առաջին հայ գաղթականները լինեին Կիլիկիայից եկած հայերը, ապա նրանք պետք է կապ պահպանած լինեին Սսի կաթողիկոսության հետ, մի բան, որ երբևէ չի եղել[20]։ Բայց 1375—1380 թթ., մինչև Լենկթեմուրի արշավանքը և Զմյուռնիան գրավելը (1402) քաղաքում ամուր դիրքեր ունեին Հոռոմոսի ասպետները, որոնք չնայած մահմեդական բեյությունների սպառնալիքներին, ստեղծել էին կայուն իրավիճակ և վերահսկում էին դրությունը։ Գաղթական կիլիկեցիները կարող էին ընդունել նրանց հովանավորությունը, բնակություն հաստատել այնտեղ՝ ընդգրկվելով պապական համագործակցության կղզիների ռազմաառևտրական հարաբերությունների ոլորտը և պաշտպանվելով մահմեդականների կեղեքումներից։ Ինչ վերաբերում է Սսի աթոռի հետ Զմյուռնիա գաղթած սսեցիների ենթադրվող կապերին, ապա XIV դարի երկրորդ կեսին և դրանից հետո քայքայված և ուժահատ սսական հոգևոր վերնախավը հաղիվ թե ուժ և հնարավորություն ունենար այդպիսիք հաստատելու։

Այսպիսով, հետազոտողները միասնական կարծիք չունեն Կիլիկիայից հայերի Զմյուռնիա գաղթելու և դրա ժամանակի հարցում։ Սակայն հայերի գաղթը դեպի Էգեյանի ափերը առավել հավանական է թվում 1375—1390-ի միջոցներին և ոչ ավելի ուշ։ 1390-ական թթ. երկարատև կռիվներ էին սկսվել փոքրասիական բեյությունների և օսմանյան սուլթան Բայազետի միջև[21]։ Ընկճված բեյությունների թուրքմեն տիրակալները կրկին գլուխ բարձրացրին Լենկթեմուրի արշավանքի ժամանակ, մասնավորապես Անկարայի ճակատամարտից հետո (1402), որն ավարտվել էր թուրքերի ջախջախումով և սուլթանի գերեվարությամբ։ Դրանից հետո, մինչև XV դարի երկրորդ տասնամյակը շարունակվում էին բախումները թուրքմեն իշխողների (Սարուխանի, Այդընի, Գերմիյանի, Մենթեշեի և այլն) և Բայազետի ժառանգների միջև, ինչպես և վերջիններիս գահակալական կռիվները, որոնք անկման հասցրին բեյությունների տնտեսությունն ու առևտուրը[22]։ Ի հետևանս և ի լրումն այս ամենի, Զմյուռնիայի և Մանիսայի շրջաններում 1410-ական թթ. ապստամբություն բռնկվեց[23]։ Ռազմական չռադարող բախումներից անպակաս այսպիսի տարածքը չէր կարող հանգրվան դիտվել հայ գաղթականների համար։ XIV դարի վերջին քառորդին Կիլիկիայից եկած գաղթականները, մինչդեռ, Զմյուռնիային կարող էին արդեն ծանոթ լինել դրանից շատ առաջ, երբ Վենետիկի և Ջենովայի ռազմական ուժերին ապավինած հայերը

---

19 Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն.—Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 6, Մոսկվա—Նախիջևան, 1911, էջ 239։

20 Գ. Պոլատյան. Էգեյանի դիցուհին՝ Զմյուռնիան և զմյուռնահայ գաղութը.—«Հառաջ», 1972, 28—29 սեպտեմբերի։

21 Գ. Այվազովսկի. Պատմութիւն Օսմանեան պետութեան. հ. Ա. Վենետիկ, 1841, էջ 43—44: J. H. Uzuncarsilogˇlu. Anadolu beylikleri ve akkoyunlu, karakoyunlu devletleri. Ankara. 1937, s. 29—31, 53.

22 А. Д. Новичев. История Турции. Т. I. Л., 1963, с. 38.

23 Նույն տեղում։

գաղթում էին նրանց ենթակայության ներքո գտնվող շրջանները։ «Արդեն հայք Կիլիկիո,— գրում է Ալիշանը,— իրենց տերության վերջին տարիներուն սկսեր էին սփռ[illegible] ինչվան ի Հունաստան և ի կղզիս ծովամիջի Փոքր Ասիո և ոմանք ի Միտելենե գալով կու խնդրեին Հռոդոսի ասպետներեն և կընդունեին Կով (Լանկո) կղզվո մեջ երկիր, եկեղեցի և մշակության եղներ և այլն՝ համի 1366»[24]։

Հ. Քոսյանի մեջբերած՝ Զմյուռնիայի և Այտընի ամենահին դամբանագրերը վերաբերում են համապատասխանաբար 1551 և 1561 թթ.[25]։ Սակայն ավելի հին դամբանագրերի չհանդիպելը դեռևս չի նշանակում, թե այդ թվականներից առաջ Էգեյանի ափերին հայ գաղթականներ չեն եղել։ Կամ գերեզմանատներն են այլ վայրեր տեղափոխվել, և կամ հին գերեզմանաքարերն են մեկից ավելի անգամ գործածվել (իբրև նոր շիրմաքարեր և կամ եկեղեցու շինության ու նորոգման նպատակներով)։

Շարունակվե՞լ է արդյոք հայերի գաղթը Էգեյանի ծովամերձ շրջաններ հաջորդ՝ XV—XVI դդ.։ Այս դեպքում ևս ուղղակի փաստեր չկան, թեև որոշ հետազոտողներ հարցին դրական պատասխան են տալիս։ Այսպես, Մակար վարդապետը գրում է, որ հայերը Նազիլի են գաղթել 400 տարի առաջ, այսինքն՝ XV դարի վերջին, Ագուլիսից, Ղարաբաղից, Ղափանից, Երևանից և այլն։ Սակայն նա որևէ փաստ չի բերում այս տեղեկության օգտին[26]։

Զմյուռնիան և նրա շրջակայքը հայաշատ պետք է դառնային 1610-ական թթ. հետո[27], երբ ջալալիների ապստամբություններից, սովից ու պարսկա-թուրքական պատերազմից պատուհասված բազմաթիվ հայեր անցան Միջերկրականի և Էգեյանի ափերը։ Այս ժամանակներից պետք է վերջնականապես կազմավորվեին Զմյուռնիայի և նրան կից բնակավայրերի հայ հանրությունները։ Հ. Դիմաքսյանը վկայում է Երևանից ու Ղարաբաղից գաղթած շերտի առկայությունը Զմյուռնիայում և նրա թեմերում[28]։ Ա. Բեկնազարյանցը գրում է, որ «այցելուաց մատնանիշ են անում մանավանդ Զմյուռնիո ամբողջ վիճակի շիրմաքարերի արձանագրություններն, հանգուցելոց գաղթած գավառների և գյուղերի անունները, որք են Ղարաբաղի Ղափան, Մեղրի են գավառներն և Կալեր, Աշան, Կճողոտ, Հացի, Հադրութ են գյուղերն»[29]։ Բազմաթիվ դամբանագրեր վկայում են, որ Զմյուռնիայի և նրա շրջակայքի (Բայանդրը, Նազիլի, Դենիզլի, Էյդեմիշ, Այտընը) հայ բնակչությունը գաղթել է Զանգեզուրից (Շաշկերտ, Շվանիձոր, Կալեր, Մանլև, Գումարք, Ջավնդուր, Ղափան և այլն), Ջուղայից, Նախիջևանից և Արարատյան դաշտի այլ բնակավայրերից[30]։

Դեպի Էգեյանի ափերը դիմող գաղթականների մասին է վկայում 1608 թ. մի հիշատակարան, որտեղ գաղթի պատճառն է համարվում սովը. «Եւ ապայ յետ այնորիկ ցրուեցաւ ազգս Հայոց յերեսաց սովուն ի Պարսկաստան, ի յԱսորեստան, ի Գուրջըստան մինչև հասին ի Ճորճէն, ի յԱփխազ, ի Կաֆայ... Ոչ թէ մասնաւոր մի երկիր կամ երկու, այլ ընդհանրական՝ սկսեալ ի դրանէն Հոնաց և Ալանաց և ի լեռնէն Կովկասու մինչև ի Պոնտոս և յԵփեսոս և ի Կապադովկիայ և մինչև ի Դամասկոս և ի Սիս և ի Միջագետս։ Բոլոր Հայաստան ամենայն ցիր և ցան եղեն»[31]։

---

24 Ղ. Ալիշան. Հայ-Վենետ. Վենետիկ, 1896, էջ 178։

25 Հ. Քոսյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 82—83, հ. Բ, էջ 25։

26 «Արևելյան մամուլ», 1879, № 3, էջ 436։

27 Հ. Քոսյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 39։

28 Հ. Դիմաքսյան. նշվ. աշխ., էջ 129, 143—144։

29 Ա. Բեկնազարյանց. Գաղտնիք Ղարաբաղի. Պետերբուրգ, 1886, էջ 241—242։

30 Հ. Քոսյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 85. հ. Բ, էջ 25—26, 51, 54. 69—70, 101։ Նույն՝ Ակնարկ մը հնության բեկորներու.—«Հանդես ամսօրյա», 1906, № 9—10, էջ 278։

31 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601—1620 թթ.), կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան. հ. Ա, Երևան, 1974, էջ 289։

XVII դարի առաջին տասնամյակին Եփեսոս (Զմյուռնիային կից) գաղթելու վերաբերյալ այս տեղեկությունը ապացուցվում է հետագա դիտարկումներով։ 1910 թ. արձանագրվել է, որ Եփեսոսի ծոցում գտնվող Գուշատա (Սկալա Նովա) քաղաքի հայոց գերեզմանատան դամբանագրերը հասնում են 300 տարվա[32]։ Հ. Քոսյանը ևս նշում է, որ հայերը Գուշատա են գաղթել XVII դարում[33]։ Այսուհանդերձ, պետք է ասել, որ 1600-ականի վերջին Զմյուռնիայի մերձակայքը անվտանգ չէր։ Ի տարբերություն Կ. Պոլսի, որտեղ գաղթական հայերի բազմությունները եկել էին արդեն 1605 թ.[34], Զմյուռնիան և նրա շրջակայքի բնակավայրերն ու քաղաքները այդպիսի հընարավորություն չէին ներկայացնում։ Այստեղ դեռևս շարունակվում էին ջալալիների հուզումները, առանձնապես ակտիվորեն էին գործում ապստամբների բազմահազարանոց զորախմբերը՝ Կալենդեր օղլուի, Կարա Սայիդի, Սաչլու Խալիլի գլխավորությամբ։ Օսմանյան պետության համար լուրջ վտանգ էր ներկայացնում Կալենդեր օղլուն, որին դժվարությամբ պարտության մատնեց թուրքական զորահրամանատար Մուրադ փաշան[35]։ Նույն ժամանակներում էր գործում Ջանփոլադ Ալի օղլի փաշան կամ Թավուլը։ Սա իր զորքով գրավել էր Հալեպը, ապա Սիսը, Ադանան, անցել Սեբաստիա և խորացել Փոքր Ասիայում։ Թավուլը «աւեր էած աշխարհի մինչև ի մեծ ծովեզերն Եփեսոս ի Զմիւռին»,— գրում է հիշատակագիրը[36]։ 1606 թ. կողմերը Թավուլն ասպատակում էր Խարբերդի շրջանում՝ անասելի չարիքներ պատճառելով հայ բնակչությանը։ «Քանզի ի յայս ժամանակիս,— գրում է հիշատակագիրը,— ելաւ Նեռի որդին կոչեցեալն Թաւուլ խիստ աւիրութիւն էառ յերկրիս Ղարբերտու, Ե (5) ամիս ի դաշտըն նստաւ զգեղորայքն աւրեց, շինութիւն պակասեցաւ»[37]։ 1602 թ. գրիչ Մատթեոսը գրում էր, որ «շատ տեղիք աւերեցաւ ի ձեռաց իսմայելացոց, զի այս ամի Բ (2) անգամ երկիրս փախստական եղաւ» (իմա Խարբերդի բնակչությունը—Ա. Խ.)[38]։ Նշված տեղեկությունները կապվում են այն իրողության հետ, որ Զմյուռնիային մոտիկ Մանիսա քաղաքի Վերին թաղի հայերը խարբերդցիներ էին։ Գ. Շահինյանը և ապա առավել համոզչությամբ Հ. Աճառյանը և Կայծոռիկը նշում են, ելնելով լեզվական իրողություններից, որ այդ թաղի հայերը գաղթել են XVII դարի սկզբին՝ Խարբերդից[39]։ Չի բացառվում, որ նրանց մի մասը տեղահանված լինի հենց Թավուլի կողմից. վերջինիս երթուղին խոսում է այդ ենթադրության օգտին։

Մանիսայի և Զմյուռնիայի՝ XVII դարի սկզբի գաղթականության վերաբերյալ չափազանց արժեքավոր են Սիմեոն Լեհացու տեղեկությունները 1609—1611 թթ. նրա ճանապարհորդության ժամանակ՝ Եփեսոս—Մանիսա—Գելիպոլի—Թեքիրդաղ—Նիկիա—Զմյուռնիա երթուղով. «Եւ անտի եկաք ի մեծահռչակ քաղաքն Մանիսայ որ է թախտ շահղատայից... Եւ կայր այս քաղաքս երեւ եկեղեցի հայոց, փայտէ տան պէս։ Մինն ի վերն լերանց վերայ և մինն ի դաշտն. կայր եպիսկոպոս մի անունըն Յակոբ Ֆրնոզցի և երկու է-

32 «Դաշինք», 1910, 10 ապրիլի։

33 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա... հ. Բ, էջ 111։

34 Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ. Երուսաղէմ, 1915, էջ ԻԴ։

35 Գ. Ալիշանի. նշվ. աշխ., էջ 499: Naima. Annals of the Turkish Empire from 1591 to 1659. New York, 1973, pp. 360—361.

36 Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմ. Վ. Ա. Հակոբյան. հ. II, Երևան, 1956, էջ 277։

37 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601—1620 թթ.), հ. Ա, էջ 215։

38 Նույն տեղում, էջ 79—80։

39 Գ. Շահինյան. Մանիսայի հայ գաղութին ծննդավայրը.—«Բյուրակն», 1889, № 31—32, էջ 504։ Կայծոռիկ և Աճառյան. Մանիսացիներն իբրև գաղթական Խարբերդի.— «Բյուրակն», 1899, № 25, էջ 403։

րէց և քանի հարյուր տուն հայի զոր սիրով ընկալան մեզ և յոյժ մեծարեցինն,— գրում է նա[40]։

Եկեղեցիների փայտաշեն լինելը վկայում է, որ գաղթականությունը նոր էր գոյացել. քարաշեն եկեղեցի կառուցելու համար ժամանակ էր հարկավոր, երբ պետք է ձեռք բերվեր տնտեսական կայունացում և բարեկեցություն։ Հիրավի, Մանիսայի քարաշեն եկեղեցին հիշատակվում է 1658-ից ոչ շուտ, մի հայտմավուրքում՝ «Յիշատակ է գիրս տէր Գրիգորին որ ետ ս. Լուսավորիչին Եկեղեցին թիվ ՌՃԷ (1658)»[41]։ Պետք է կարծել, որ մանիսացիների՝ քարաշեն եկեղեցի կառուցելու գործը հապաղել էր 1630-ական թթ. Էլիաղ փաշայի ապստամբության պատճառով, որը իրեն հռչակել էր Մանիսայի կառավարիչ և թալանել տեղի ժողովրդին[42]։ Անկախ դրանից, պետք է եզրակացնել, որ Սիմեոն Լեհացու հիշատակած Մանիսայի հայերը գաղթել էին XVII դարի առաջին տասնամյակին, երկու թաղերն էլ գրեթե միաժամանակ, ընդ որում՝ Վերի թաղեցիները խարբերդցիներ էին։

Սիմեոն Լեհացու մյուս տվյալները բավական լույս են սփռում Զմյուռնիայի գաղթավայրի վրա։ Այստեղ, գրում է նա, «կայր հայոց եպիսկոպոս մի, հաբեղայ մի և էրէց մի, հարյուր տուն հայի և երկու եկեղեցի՝ մինն ի բերթն և մինն ի դուրս»[43]։ Եթե XVII դարի առաջին տասնամյակին զմյուռնահայ գաղութը կազմված է եղել 100 տնից, ապա դժվար է ենթադրել նոր գաղթականության առկայությունը, որ ակնառու է Մանիսայում։ Ջալալիների մեկը մյուսին հետևող ապստամբությունները ծանր հարված էին հասցրել Զմյուռնիայի առևտրին, քաղաքը դարձրել անհուսալի և անապահով՝ գաղթականների համար։ 1600-ական թթ. սկզբին, ինչպես գրում է հանապարհորդը. բնակիչների մեծ մասը լքել էր այրված քաղաքը[44], 1622 թ. Զմյուռնիայում և շրջակայքում խժդժություններ էին անում ապստամբ ենիչերիները՝ պատուհասելով քրիստոնյա երկրների հյուպատոսներին[45]։ Դրանից հետո էլ, 1630-ական թթ. Այտընի շրջանում գործում էին Կնալը օղլուի ապստամբ ջոկատները և այլն[46]։

Զմյուռնիայի հայ բնակչությունը մարդաշատ պետք է դառնար 1620-ականից ոչ շուտ, երբ դարասկզբից Հայաստանի տարբեր վայրերից Միջերկրածովյան և Էգեյանի տարածքներում ապաստանած հայերն արդեն, որոշած պետք է լինեին իրենց վերջնական հանգրվանները։ Հիրավի, Զմյուռնիա այցելած Տավերնիեի տվյալներով 1631 թ. հայերի թվաքանակը հասնում էր 8000-ի (ընդհանուր բնակչությունը՝ 90000)[47]։ Բնականաբար, դարասկզբի 100 ընտանիքը երկու տասնամյակի ընթացքում այսչափ աճ չէր կարող տալ, որ և վկայում է Զմյուռնիա գաղթականության գալու մասին։

XVII դարի առաջին տասնամյակներին պետք է վերագրել հայ համայնքի գոյացումը Զմյուռնիայի մերձակա Մենեմենում։ Մելքիսեթ կաթողիկոսի ժամանակ է կառուցվել Մենեմենի Ս. Սարգիս եկեղեցին[48]։ «Երեք հարյուր տարվա հնություն մը ունի Մենեմենի հայ գաղութը, որը Գաղատիո հսկա գաղութեն անջատված հատված մըն է։ Էնկյուրիի Քառասնից մենաստանին

---

40 Սիմեոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն. Վիեննա, 1936, էջ 37։

41 Գ. Շահինյան. նշվ. աշխ., էջ 12։

42 Rucaut. The History of the Turkish Empire. London, MDCLXXX, p. 35.

43 Սիմեոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, էջ 37—38։

44 Sandys Travels Containing an History of the Oriental State of the Turkish Empire. London, 1673, p. 12.

45 W. Eton. A survey of the Turkish Empire. New York, 1973, p. 163.

46 Մ. Զուլալյան. Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI—XVII դարեր). Երևան, 1966, էջ 215։

47 The six voyages of J. B. Tavernier. London, 1678, p. 313.

48 «Արշալույս», 1908, 16 հունվարի։

ձեռագիրները այսօր Մենեմեն կգտնվին»,— գրում է Զմյուռնիայի «Դաշինք»[49]։

XVII դարի սկզբներին նշանակալի քանակությամբ հայեր կային Այտընում։ Այտընը առաջնորդական նստավայր էր և պետք է նշել, որ այստեղ առավել մեծաթիվ հայ բնակչություն էր կենտրոնացած, քան Զմյուռնիայում (գոնե մինչև 1620-ական թթ.)։ Մակար եպիսկոպոսը գրում է, որ Հայաստանի տարբեր կողմերից գաղթած Այտընի հայ բնակչությունը «երբեմն ավելի բազմաթիվ են եղեր և առնվազն 500 տունեն կբաղկանային, ինչպես որ հին արձանագրությունները կվկայեն»[50]։

XVII դարի 30-ական թթ. և դեռ դրանից հետո էլ Այտընում գործել են հայ եպիսկոպոսներ։ 1635 թ. հալեպցի Սարգիս երեցը Զմյուռնիայից գնացել է Այտըն, որտեղ Տրդատ եպիսկոպոսը նրան տվել է «զկարգ և զպատիվ քահանայութեան»[51]։ Այտընի ամենահին դամբանագիրը վերաբերում է 1561 թ.[52], հետևաբար, հայերն այստեղ բնակություն են հաստատել XVI դարի առաջին կեսից ոչ ուշ[53]։

XVII դարի առաջին կեսին Այտընում հայտնվել է նոր գաղթականություն՝ ի դեմս Զանգեզուրից եկած հայերի[54]։ XVII դարի առաջին քառորդին Զմյուռնիա և շրջակայք գաղթած բազմությունների մեջ մեծամասնություն են կազմել Մեղրու, Ղափանի, Սիսիանի, Արարատյան դաշտի հայերը, որոնք ցրվել էին Նազիլիում, Ագհիսարում, Պերկիում, Էյդեմիշում, Բերգամայում, Այտընում, Գրգաղաճում, Թիրայում և այլուր։ 1620-ական թթ. բարձրանում է Զմյուռնիայի Ս. Ստեփանոս և Ս. Բարդուղիմեոս եկեղեցու հեղինակությունը տեղի հայության մեջ և առհասարակ եկվոր վաճառականության շրջանակներում։ 1625 թ. խոջա Ավետիքը մի ճառընտիր է նվիրել «յիշատակ ի դուռն յԻզմիրայ ս. Ստեփաննոս Նախավկային»[55], իսկ 1628 թ. մի այլ վաճառական՝ Զենապ Չելեպին ս. Բարդուղիմեոսի անվամբ ավետարան է նվիրել[56]։ Դարի երկրորդ քառորդին Զմյուռնիայի հայերի թիվը մեծացել էր. կրոնական որոշ հանդուրժողականությունը և առևտրի նպաստավոր պայմանները հայերին մղում էին մերձակա տարածքներից անցնել Զմյուռնիա։ Ղափանի, Մեղրու, Սիսիանի և Ագուլիսի շրջաններից հայերի գաղթի գործում պետք է հաշվի առնել տեղական վաճառականների ընդարձակ կապերը Փոքր Ասիայի արևմտյան մասերի, արշիպելագի կղզիների և իտալական առևտրական կենտրոնների հետ։ Հիրավի, այս ժամանակաշրջանի Վենետիկի հայ գաղութում ազդեցիկ դեր են կատարել հատկապես մեղրեցի վաճառականները, որոնք աչքի էին ընկնում, ի դեպ, իրենց առևտրական տների հարատևությամբ[57]։

Զմյուռնիայի և նրա թեմերի գերեզմանատների դամբանագրերում արձանագրված են Զանգեզուրի բազմաթիվ գյուղերի անունները՝ հանգուցյալների ծննդավայրերը։ Դրանցում հիշվում են Շաշկերտ (Շաշկետ, Շիշկետ ձևերով), Կալեր, Զավնդուր, Շվանիձոր, Մազրա, Ղմարք, Քուշերթ, Ղափան, Ափքես, Մանլև, Գիրաթաղ (Կերթայթաղ) և այլ գյուղեր[58]։ Ակներև է, որ այս գաղթականները եկել էին XVII դարի առաջին քառորդին և որ նրանց գաղթը

---

49 «Դաշինք», 1911, 18 փետրվարի։

50 «Արևելյան մամուլ», 1879, № 3, էջ 437։

51 ՄՄ, ձեռ. № 413, էջ 65։

52 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա..., հ. Բ, էջ 25։

53 Գ. Պոյաճյան. Նշվ. աշխ.—«Հառաջ», 1972, 24 հոկտեմբերի։

54 Հ. Քոսյան. Ակնարկ մը հնության բեկորներու, էջ 278։

55 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621—1640 թթ.), կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան. հ. Բ, Երևան, 1975, էջ 187։

56 Նույն տեղում, էջ 314։

57 Ղ. Ալիշան. Սիսական. Վենետիկ, 1893, էջ 301։

58 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա..., հ. Բ, էջ 25, 69—70, 101 և հտ.։

հայրենիքից խրախուսվել և նույնիսկ ուղղություն էր ստացել Զմյուռնիային վաղածանոթ վաճառականների առաջնորդությամբ։ Ուշագրավ է մի հիշատակարան՝ գրված «Ղնխոյ երկրում» (Գնոք, քաղաք Զմյուռնիայի մերձակայքում)։ Այն գրվել է «ի թուականութիւն Հայոցս ՌՁԶ (1637), ի դան և ի նեղ ժամանակի այլազգաց Տաճկաց, զոր և մեզ հանդիպեալ սուրն վաղակաւոր պատենիցն մերկացեալ, նայև մեզ արմատախիլ արար ի բնական գաւառէ մերմէ և ի հայրական ժառանգութենէ։ Քանզի էաք մեք յերկրէն Արարատեան ի Հայոց մեծաց ի հատէն սբ. Գրիգորի, և ի թէմէն լուսակառուց սբ. Էջմիածնայ ի գեաւղէն Թալին կոչեցեալ։ Որ և իսկապէս թալանեցաք ի ոեփական վիճակաց, տանց և ընթանաց, ազգաց և բարեկամաց, այլ և ամենայն իրաց։ Ի պէսպէս վշտաց պատահեալ, բայց ողորմութիւնն Աստուծոյ պահեալ մինչև ցայժմ ի գերութենէ, քանզի մեզ սիրով բերին այսչափ ճանապարհս...»[59]։ Թալինցիների, ինչպես և մյուս գաղթականների (Զանգեզուրից) տեղաշարժերը եղել են կազմակերպված, գաղթողները կարողացել են խուսափել գերությունից։ Իսկապես, 1635 թ. օգոստոսին թուրքերը գրավել էին Երևանը[60] և ավերածություններ էին անում Արարատյան դաշտում։ XVII դարի առաջին քառորդում Զմյուռնիայում հաստատվել են նաև Արևմտյան Հայաստանից գաղթած բնակիչներ։ Այս իմաստով ուշադրություն է գրավում Հ. Դիմաքսյանի գրառած մի դամբանագիրը՝ «Այս է տապան բաղշեցի Յովհաննէսի որդի Աւագի կողացւոյն»[61]։

XVII դարի երկրորդ կեսին և դրանից հետո մինչև XVIII դարի 40-ական թթ. ավելի կամ պակաս հոսքով շարունակվել են Արևելյան Հայաստանի բնակչության գաղթերը դեպի Էգեյանի ափերը։ Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված Կասրե Շիրինի համաձայնագրով (1639) Արևելյան Հայաստանը դադարեց արյունահեղ բախումների ասպարեզ լինելուց, սակայն ժողովրդի տնտեսական ու կրոնական կեղեքումները չդադարեցին։ Այս անդամ ևս անտանելի ճնշումներից աղատվելու նպատակով գաղթի ուղին բռնեցին Զանգեզուրի, Արարատյան դաշտի բազմաթիվ հայ բնակիչներ։ Բերգամայի 1711 թ. մի հիշատակարանում հիշվում է Վարդան երեցը՝ Կարբիից[62]։ XVII դարի 40-ական թթ. Զմյուռնիա են գաղթել նաև Կեսարացի հայեր։ Կեսարացի «խոճա Մուրատը և Ճիհանշայն» Ս. Ստեփանոս և Ս. Բարդուղիմեոս եկեղեցուն են նվիրել Կեսարիայում գրշադրված մի ձեռագիր[63]։ Նույն ժամանակներում Կեսարիայից Զմյուռնիա էր գաղթել Էքիզյան ընտանիքը[64]։ Կեսարացիները ցրվել էին շրջակա քաղաքներում և ավաններում։

Շահ Աբասի ժամանակներից ի վեր և հետագայում շարունակվող գաղթերը ամբողջ XVII դարում և հետո, թվում է, մարդաշատ պետք է դարձնեին Էգեյանի շրջանի հայ գաղթավայրերը։ Մինչդեռ, գոնե Զմյուռնիայի վերաբերմամբ, այսպիսի աճ չի նկատվում։ Ըստ Տավերնիեի, ինչպես վերը նշեցինք, 1631 թ. հայերի թիվը հասնում էր 8000-ի (ընդհանուր բնակչությունը՝ 90000)։ 1700—1714 թթ., ինչպես նշում են ֆրանսիացի ճանապարհորդներ Ժ. Պ. Թուրնֆորը և ապա Պ. Լուկան, այդ քանակը մնում էր նույնը (ընդհանուր բնակչությունը՝ 100000)[65]։ 1731 թ. այդ թիվը նվազել հասել էր 7000-ի (ընդհանուր բնակչությունը՝ 76000)[66]։ Բնակչության, այդ թվում և հայերի

---

59 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ. (1621—1640 թթ.), հ. Բ, էջ 704։

60 Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ (1601—1650 թթ.), կազմ. Հ. Դ. Փափազյան. պր. 2, Երևան, 1959, էջ 26—27։

61 Հ. Դիմաքսյան. նշվ. աշխ., էջ 351։

62 ՄՄ, ձեռ. № 2129, էջ 29ա, 51ա։

63 ՄՄ, ձեռ. № 6332, էջ 215ա—216։

64 «Արշալույս», 1908, 1 մայիսի։

65 J. P. Tournefort. Voyage d'un botaniste. Paris, 1982, p. 313. «Բյուզանդիոն», 1909, 24 գեկտեմբերի։

66 Գ. Պոլաճյան. նշվ. աշխ.—«Հառաջ», 1972, 30 սեպտեմբերի։

թվաքանակի նվազելու պատճառը Զմյուռնիայում մեկը մյուսին հետևող երկրաշարժերը, հրդեհներն ու համաճարակներն էին (1632 թ. հրդեհը[67], 1681 թ. սովը և երաշտը, 1688 թ. երկրաշարժը և այլն)։ «1688-ին այնքան ահռելի եղավ (երկրաշարժը—Ա. Խ.), որ քաղաքը բոլորովին կործանեցավ»,— գրում է Պ. Լուկան[68]։ Զաքարիա սարկավագը խիստ տպավորիչ է ներկայացրել 1680-ական թթ. քաղաքում տարածված տարերային աղետներն ու համաճարակը[69]։ Մի աղոթամատույցում (1703) Թումի որդի Զաքարիան գրում է. «Օվ սիրելիք, հայրք և եղբայրք, մի մեղայ տիր լերուք վասն պակասութեան կամ սղալութեան կամ ամենայն հարկի սորա, որ խիստ սըխալաթ տեղ դրեցանք, որ մահ եղեւ Իզմիր և փախանք...»[70]։ Պետք է նկատի առնել բուն իսկ զմյուռնահայերի գաղթը Կ. Պոլիս, եվրոպական երկրներ և այլն, որ նոսրացնում էր տեղի հայության թիվը[71]։

Նոր գաղթերը փոխհատուցելու էին այդ նոսրացումը։ 1720-ական թթ. պարսկական ծանր հարստահարումները և վերսկսված իրանա-թուրքական պատերազմները պատուհաս դարձան արևելահայ բնակչության համար։ «Երբ խայերն կտեսնեն, որ էլ ճար չկա, նեղութիւն օրըստօրէ իվելանման ա, շատ գեղ և շատ մարդ խիզանով փախան գնացին օսմանցու երկիրն»,— գրում է Պետրոս դի Սարգիս Գիլանենցը[72]։ Դավիթ բեկի հերոսական պայքարի շնորհիվ Ղափանում ծանր հարված հասցվեց մահմեդական զավթիչներին, սակայն Արարատյան դաշտում թուրքերը ասպատակում և գերեվարում էին հայ բնակչությանը։ Գերվածներին վաճառում էին Կ. Պոլսի շուկաներում, ընդ որում, նրանց քանակն այնքան շատ էր, որ Կ. Պոլսի Կոլոտ պատրիարքը բողոքել էր մեծ վեզիր Իբրահիմին՝ «խափան դնել անիրաւութեանցն այնոցիկ»[73]։ Տեղահանված և փախստական բազմաթիվ հայեր էին կուտակվել 1727 թ. Կարինում, Եվդոկիայում, Սեբաստիայում, Կոնիայում և այլուր[74]։ Դրությունը փոխվեց 1732 թ., երբ հայ փախստականները հնարավորություն ստացան հեռանալ նպատակահարմար թվացող վայրերը՝ հաշտություն էր կնքվել թուրքերի և պարսիկների միջև։ «Զի բազում մարդիկ տնով չեկեցին աստի, ոմանք գնալով Իզմիր, ոմանք Կոստանդինուպոլիս, և ոմանք ի Տրապիզոն, ոմանք Ղրիմ և ոմանք այլուրեք»,— գրում է Հ. վ. Ներսեսյանը Մխիթար աբբային[75]։ Նամակը կարող էր գրվել և՛ Կարինից, և՛ Եվդոկիայից, ինչպես նկատում է Ա. Ալպոյաճյանը[76], հնարավոր է՝ նաև Կոնիայից կամ Սեբաստիայից, որտեղ կային ոչ քիչ թվով հայ փախստականներ։

Զանգեզուրում ազատագրական շարժման տեղատվությունից հետո խուսափելով պարսկական վայրագություններից, մարդիկ գաղթում էին հայրենի վայրերից։ 1730-ականի սկզբին Զմյուռնիա գաղթեց Նուպարյանների գերդաստանը, որը սերում էր Զավնդուրի Թորոս իշխանից[77]։ Այս տասնամյակին ոչ քիչ խմբեր են անցել Թուրքիա, մասնավորապես

---

67 ՄՄ, ձեռ. № 6532, էջ 206։

68 «Բյուզանդիոն», 1909, 24 սեպտեմբերի։

69 Զաքարիա սարկաւագի պատմագրութիւն. Վաղարշապատ, 1870, հ. 2, էջ 26։

70 ՄՄ, ձեռ. № 7002, էջ 3բ—4։

71 Թ. Ճերմակյան. նշվ. աշխ., էջ 83։

72 ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի.—«Կոռնկ հայոց աշխարհին», 1863, № 3, էջ 201։

73 Գ. Այվազովսկի. նշվ. աշխ., հ. Բ, էջ 173։

74 Ղ. Տայան. Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար. Վենետիկ, 1930, էջ 106։

75 Նույն տեղում, էջ 290։

76 Ա. Ալպոյաճյան. Պատմություն Եվդոկիո հայոց. Կահիրե, 1952, էջ 339։

77 Վ. Զարդարյան. Հիշատակարան. հ. Գ, Կահիրե, 1934, էջ 7—47։ Նույնի՝ Նուպար փաշա.—«Բյուրակն», 1899, № 13, էջ 195—196։

Զմյուռնիա։ Գործում էր հնուց ձևավորված գաղթի մեխանիզմը՝ զանգեզուրցիները կապեր էին պահպանում զմյուռնացի հայրենակիցների հետ։

1740—1750-ական թթ. շարունակվում էր Թուրքիայի հայ գաղթավայրերի համալրումը Արևելյան Հայաստանի բնակչությամբ։ Զենքի ուժով Պարսկաստանին կցած տարածքները պահպանելու նպատակով Նադիր շահը սաստկացրեց հարկահանությունն ու տնտեսական բռնության այլ միջոցները։ Չհանդուրժելով անտանելի ծանր պայմանները, գրում է Խաչատուր Ջուղայեցին, «բազումք յազգէս հայոց ետուն զամենայն ստացուածս իւրեանց և ինքեանք մերկք և կողոպուտք՝ անկան փախստական ի տար աշխարհս»[78]։ Նադիրի մահից հետո երևրում ծայր առած անկարգությունները ավելի ծանր դարձրին հայ բնակչության վիճակը, նորից ձգվեցին գաղթի անվերջանալի ճանապարհները դեպի Թուրքիա, Ռուսաստան և այլուր։ Զմյուռնիան և շրջակայքը ևս անմասն չմնացին նոր գաղթականությունից։ 1746 թ. այստեղ գաղթեցին Նախիջևանի հայ կաթոլիկները։ Ղ. Ալիշանը գրում է, որ Նախիջևանցիների առաջնորդ Թովմաս Իսավերգենցը «յաջողեաց... բացի սակաւուց ոմանց զամենայն մնացեալսն, զծերս և զմանկունս և եռամսեայ դրժուարակիր և տառապագին ուղևորութեամբ հատանել անցանել ընդ բովանդակ Մեծ և Փոքր Հայս և հասուցանել ի Փոքուն Ասիոյ ի Զմիւռնիա քաղաք հոգիս աւելի քան զհազար, ընդ որս եկին և սակաւք ոմանք ի հարց վանորէիցն այլ ոմանք ցրուեցան յարեւմուտս և ոմանք մնացին ի հայս»։ 1762 թ. Հռոմի ս. ժողովին ուղղած խնդրագրում ևս գաղթական չահկեցիները մատնանշում են իրենց նոր բնակության վայրերը. «Վասն մեղաց մերոց,— գրում են նրանք.— բաղմացան նեղիչք մեր, որ ոչ կարացաք տանել. վասն այսորիկ թողուք զհայրենի յերկիրն մեր և բնակութիւնն մեր եկաք աստ ի քաղաքն Իզմիր և մասն մի ի քաղաքն Թիրադիր (Թիւրատիր) որ եմք թվով 700 անձինք»[79]։

Մի հայսմավուրքի հիշատակարանից երևում է, որ գաղթել էին ոչ միայն Նախիջևանցի կաթոլիկները, այլև Երևանի ու նրա շրջակայքի հայ բնակչության մի մասը, և որ այդ գաղթերը տեղի են ունեցել նույն ժամանակ՝ 1746 թ.։ «Ի թուականս հայոց ՌՃՂԶ (1746) ամսեանն ապրելի ԺԱ-ին (21), որ էր ի ժամանակն պարսից անագորուն և անոպա Նադր շահին զոր յոյժ նեղութիւն ունէին պարսից իշխանութեան ենթ ժողովուրդքն թող զանիրաւ հարկապահանջութիւն զոր առաւել էր քան զառաջինսն յաւել ևս չար ի վերայ չարեաց և վէրք ի վերայ վիրաց զոր Նախիջևանայ երկրին վերայ ձգեալ էին ԼԵՌ (35000) թումն և Երևանու երկիրն ԽՌ (40000) թումն, որ բազումք հանդերձ տամբք մեծաւ տառապանօք եղեալ ի տանց և ի հայրենեաց փախան յերկիրն օսմանցոց»,— գրում է հիշատակագիրը[80]։ Մ. Թաղիադյանի մի տեղեկությունից երևում է, որ Զմյուռնիա են գաղթել կարբեցիները. «Վերջին աւերած Կարբւոյ,— գրում է նա,— եղն յաւուրս Նադրայ արքայի պարսից, յորոց ի բնակչացն կէսք գնացին ի Զմիւռնիա, իսկ կէսքն եկին յԵրևան»[81]։

Անկասկած, այս տեղեկությունը համընկնում է վերոհիշյալ հայսմավուրքի արձանագրած՝ 1746 թ. գաղթին։ Կարբեցիները, ինչպես և երևանցի առևտրականները դեռ XVII դարում կարող էին ծանոթ լինել Զմյուռնիային, ճիշտ այնպես, ինչպես, ասենք, Զաքարիա Քանաքեռցին։ Այս դեպքում ևս կարբեցիների ընտրությունը պատահական չի եղել. 1705—1706 թթ. «մեղոք լցեալ» կարբեցի Վարդան գրիչը թափառում էր Զմյուռնիայում, դրան

78 Խաչատուր Ջուղայեցի. Պատմութիւն Պարսից. Վաղարշապատ, 1905, էջ 269։

79 Ղ. Ալիշան. Սիսական, էջ 406, 407։

80 Հ. Ամատյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Բայազետի.—«Հանդէս ամսօրյայ», 1913, № 10, էջ 630։

81 Մ. Թաղիադյան. Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր. Երևան, 1975, էջ 122։

կից Թուրգութում և Այտընում (Կյուղել Հիսար)։ Նման դեպքերում գաղթավայրի ընտրությունը կապվում է վաղեմի ծանոթությունների ու հարաբերությունների հետ, որի հիմքում ընկած էին վաճառականությունն ու առևտուրը։

1740-ական թթ. Էգեյանի ափերն են գաղթել վայոցձորեցի հայեր։ Այս ժամանակաշրջանում է, մեր կարծիքով, Դարալագյազի Մթնաձոր (Մատնեձոր, Մտնաձոր) գյուղից Զմյուռնիա գաղթել մելիք Վանին։ Սրա թոռը՝ զմյուռնացի Մելիքյան Մկրտիչը հետագայի իր մի գրությամբ հայտնում էր պապի անտերունչ մնացած ունեցվածքի մասին, որ լքվել էր «ի ժամանակս Թահմազ Ղուլի շահին, որ ի Նադր շահն»[82]։ 1745 թ. չդիմանալով պարսից անագորույն լծին՝ Շիրակից Զմյուռնիա է գաղթում մելիք Խանբաբը՝ դարձյալ յուրայիններ խմբով։ Սրա հետնորդները՝ Ստեփան և Խաչատուր Մելիքսելիմյանցները Էջմիածնի սինոդին հղած դիմումի մեջ գրում են, որ «Մելիք Խանբաբ... չհանդուրժեալ յասպատակութեանց և ի բռնութեանց յերկրին պարսից, խոյս տամ(բ)ք իւրովք յերկիրն օսմանցւոց ի քաղաքն յԻզմիւռնիա յամի տեառն 1745-ին»[83]։ Նույն ժամանակներում Անիի կողմերից Զմյուռնիա են գաղթել եղվարդցի Հովհաննեսը և նրա որդի Կարապետը, որոնց ուղեկիցների թիվը հասնում էր մի քանի տասնյակի[84]։

XVIII դարի կեսին չքավոր գաղթականների բնակության համար Զմյուռնիայում հիմնվում է այսպես կոչված «օտալարը» անշուք մի շինություն, ուր ապաստանել են նաև տնանկ հիվանդները, ինչպես նշված է ս. Լուսավորչյան հիվանդանոցի տեղեկագրում[85]։ Գործում էր նաև հիվանդանոց՝ գաղթական հիվանդներին խնամելու համար[86]։ Հյուրանոցի և հիվանդանոցի գոյությունը ինքնին վկայում է Արևելյան Հայաստանից գաղթածների բազմամարդության մասին։

1740-ական թթ. Զմյուռնիայում հաստատվել են զգալի թվով հայ վաճառականներ, որոնք իրենց մասնակցությունն են բերել համայնքի հասարակական ձեռնարկումներին։ Զմյուռնիայի Ս. Ստեփանոս եկեղեցու արձանագրությունը վկայում է այդ իրողության մասին. «Ի թուին ՌՃՂԲ (1743) յունիսի 15 Աստուծով և օժանդակութեամբ հոգւոյն սրբոյ սկիզբն եղեւ վերըստին նորոգութեան ս. Ստեփանոս եկեղեցւոյս... արդեամբք և տրօք առհասարակ ժողովրդոց լուսավորչածնից տեղացւոց և վաճառականաց եկաց և բնակաց»[87]։ 1755 թ. Աղեքսանդր կաթողիկոսը Զմյուռնիայի Իսահակ առաջնորդին ուղղած կոնդակում տարբերակում էր «վաճառականաց բնիկ և մուսաֆիրներաց» (հյուրի. եկվորի իմաստով—Ա. Խ.), ինչը Ա. Ալպոյաճյանին իրավացիորեն հիմք է տվել նկատելու, որ «միշտ բնիկներու և եկվորներու խոսք մը կա, ինչ որ կրկին գաղթականությունները կմատնանշեն»[88]։

Կոնկրետ վկայություններ այն մասին, թե արդյոք 1796 թ. Աղա Մահմադ խանի արշավանքի ժամանակ հայերը գաղթել են Զմյուռնիա՝ մեզ չհաջողվեց գտնել։ Թեև Հ. Քոսյանը դա իրողություն է համարում, սակայն այդ հաստատող որևէ վկայակոչում չի անում։ Ըստ երևույթին՝ նա հենվել է Կ. վարդ. Շահնազարյանի՝ 1859 թ. հրատակարած Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» համար գրած առաջաբանի վրա։ Կ. Շահնազարյանը այստեղ նըկարագրում է Մարտիրոս արքեպիսկոպոսի՝ Զմյուռնիայի առաջնորդ նշանակվելու նախընթաց դեպքերը։ Մարտիրոսը, գրում է նա, «ի գալ Աղա

82 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 248, վավ. 1096։

83 Նույն տեղում, թղթ. 169ա, վավ. 70։

84 ՄՄ, ձեռ. № 10272։

85 Ա տ ո մ. նշվ. աշխ.—«Արևելք», 1902, 22 մայիսի։

86 Նույն տեղում։

87 Տ. Պ ա լ յ ա ն. Գավազանագիրք առաջնորդաց Զմյուռնիոյ.—«Դպրնի», 1921, № 1, էջ 26—27։

88 Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Առաջնորդություն հայոց Իզմիրի.—«Բյուզանդիոն», 1904, 12 ապրիլի։

Մահմատ խանին ի 1245 թուին հայոց (1796) ընդ... Տաթեւու գիւղացւոցն գնաց ի Նախիջեւան և անտի ի սուրբ աթոռն Էջմիածնի, ըստ որում ևս ընդ տէր Յակոբ քահանային՝ հօրն իւրոյ, գնաց ի Զմիւռին քաղաք, ըստ որում բնանիչ երերես յառաջմէ անդ էին գնացեալ» (ընդգծումն իմն է—Ա. Խ.)[89]։ «Յառաջմէ» ավելի շուտ կարող է նշանակել ոչ թե Աղա Մահմադ խանի ժամանակ, այլ դրանից առաջ՝ մեր կարծիքով, 1740—1750-ական թթ.։ Հիրավի, հայերը Տաթևից Զմյուռնիա և շրջակայք էին գաղթել այս ժամանակաշրջանում. Այտընի շիրմաքարերից մեկը պատկանում է «տաթևացի տէր Գեորգի որդի տէր Օվանեսին՝ ՌՄԺԲ (1763)[90]։ Հենց այս գաղթականությունն է, որ Տաթևի վանքին կալվածքներ էր նվիրել Զմյուռնիայում և կից բնակավայրերում (Գրգաղաճ, Էյդեմիշ, Նազիլի և այլն)[91]։

XVIII դարի առաջին կեսին գաղթականները հաստատվում էին ոչ միայն Զմյուռնիայում, այլև նրա շրջակա բնակավայրերում. Զանգեզուրի, Ղարաբաղի, Նախիջևանի բնակիչները, ինչպես նշում է Կ. վարդ. Շահնազարյանը, «ելքին զարարս իւրեանց և զերկիր ծննդեան եւ անցեալ գնացին ոմանք ի Թուրքաստան. զտեղի կալեալ ի Զմիւռնիա, ի Կոստանդնուպօլիս, ի Պերգամ, յէօտեմիշ, յԱղհիսար, այլք ի Շուշի, ի Տփխիս, և մինչև Հաժտէրխան»[92]։ Զմյուռնիայի շրջակայքի նշված բնակավայրերին պետք է ավելացնել Գրգաղաճը, Նազիլին, Գուշատան, Գնրքը, Սյոքեն և այլն։

Այս ժամանակաշրջանի Զմյուռնիայի և կից շրջանների դամբանագրերը վկայում են «ապանցի, շաշկետեցի, կալերցի, կարբեցի, երևանցի, երերնեցի, մանլևեցի, ափքեսեցի, նախիջևանցի և այլ եկվորների մասին, ամբողջովին կամ գրեթե ամբողջովին գաղթած այն նույն վայրերից, որոնք հիշվում են XVII դարի շիրմաքարերի արձանագրություններում։ Հանդիպում են նաև խարբերդցիների, թոքատցիների, կեսարացիների և այլ շրջաններից եկածների շիրմաքարեր, որոնք համեմատաբար փոքրաթիվ են՝ դատելով ըստ Հ. Քոսյանի մեջբերումների[93]։

Զմյուռնահայ գաղթօջախի վերջին համալրումը կատարվել է 1790-ական թթ., երբ «բավական թվով կաթողիկեա հայ գաղատացի վաճառականներ իրենց բախտն այլուր փորձելու համար թողած են իրենց ծննդյան վայրը և տնով-տեղով դիմած են Զմյուռնիա»։ Սրանց մի մասն անցել է Այտընի[94]։

Այսպիսով, Էգեյանի մերձակա տարածքներում՝ Զմյուռնիայի և նրա թեմերի հայ գաղթավայրերում գաղթական հայերը բնակություն են հաստատել հետևյալ փուլերով. 1. Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, Կիլիկիայից, XIV դարի վերջին քառորդից, որ շարունակվել է մինչև XV դարի առաջին կեսը։ 2. XVII դարի երկրորդ տասնամյակից՝ Օսմանյան Թուրքիայում բռնկված ջալալիների ապստամբության, Արևելյան Հայաստանում Շահ Աբասի գործադրած բռնագաղթերի և տարածված սովի պատճառով, հիմնականում Զանգեզուրից (Մեղրի, Ղափան, Սիսիան), Խարբերդից և Արարատյան դաշտից։ Այս գաղթերը մեկանգամյա ակտ չեն եղել, այլ ավելի կամ նվազ հոսքերով շարունակվել են մինչև XVIII դարի առաջին տասնամյակները։ 3. 1720-ական թթ. վերսկսված պարսկա-թուրքական պատերազմների ժամանակաշրջանից մինչև Նադիր շահի թագավորության վախճանը և դրան հետևող տարիները (1750-ական թթ.)։ Այս երեսնամյակին

89 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա..., հ. Ա, էջ 113—114։

90 Նույն տեղում, հ. Բ, էջ 28։

91 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 447, թղթ. 48, վավ. 221։

92 Ստեփաննոս Օրբելեան. Պատմութիւն նահանգին Սիսական. Փարիզ, 1859, էջ 30։

93 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա..., հ. Ա, էջ 90—96. հ. Բ, էջ 25—28, 52—55, 70, 86—93 և այլն։

94 Նույն տեղում, հ. Ա, էջ 320—321, հ. Բ, էջ 38—39։

հայերը գաղթել են Արևելյան Հայաստանի այն տարածքներից, որոնք ընդգրկում են Մեղրին, Ղափանը, Սիսիանը, Նախիջևանը, Ղարաբաղը, Երևանը և նրա շրջակա գյուղերը։ 1730-ական թթ. էգեյանը ափերն են գաղթել նաև բավական թվով արևմտահայ գաղթականներ (Եվդոկիա, Կեսարիա, Խարբերդ և այլն)։ Հայ բնակչությունը Փոքր Ասիայի արևմտյան մասերում հայտնվել է հիմնականում կազմակերպված գաղթերի ձևով, որ վկայվում է գաղթի մեկնակետի և հանգրվանի մեծ հեռավորությամբ, ինչպես և հայրենակցական համայնքների առկայությամբ (Զմյուռնիայում, Էյգեմիշում, Նազիլիում, Հուշաաայում, Դենիզլիում, Մանիսայում, Այտընում և այլն)։ Կազմակերպված գաղթերը նաև ցույց են տալիս, որ էգեյանի մերձակա շրջանների ընտրությունը՝ իբրև գաղթավայրի, պատահական չի եղել։ Տվյալ գեպքում, գոնե արևելահայ գաղթականների համար, էական նշանակություն է ունեցել Մեղրիի, Ղափանի, Նախիջևանի, Ագուլիսի և Երևանի հայ վաճառականության փորձը, որ նա ձեռք էր բերել XVI—XVII դդ.՝ շնորհիվ փոքրասիական առևտրական ուղիների իր լավատեղյակության։ Հայ առևտրականության այդ իրազեկության ու կապերի շնորհիվ էգեյանի ափերը եկած հայ գաղթականները XVII—XVIII դդ. շարունակել են իրենց առնչությունները բնաշխարհի ժողովրդի հետ, որը իր հերթին նախորոշել է հայ գաղթականների մուտքը այդ տարածքները։

МИГРАЦИЯ АРМЯН В ПРИБРЕЖНЫЕ РАЙОНЫ ЭГЕЙСКОГО МОРЯ (XIV—XVIII вв.)

Доктор ист. наук А. А. ХАРАТЯН

Резюме

В XIII в. в г. Смирне армянское купечество играло значительную роль, однако сведений о существовании там армянских поселений нет. В последнюю четверть XIV в. вслед за падением Киликийского армянского царства прибрежные районы Эгейского моря (г. Смирна с прилегающими районами) стали заселяться армянскими иммигрантами. В дальнейшем, в первой четверти XVII в., здесь образовались новые армянские колонии в результате восстания джалали в Османской Турции, насильственных переселений армян Шах-Аббасом и голода 1600-х гг. Армяне, мигрировавшие из Зангезура, Агулиса, Нахичевана, Харберда, Еревана и его окрестностей, поселились в Смирне, Айдыне, Манисе, Назилли, Денизли, Менемен и других поселениях. В результате возобновившихся ирано-турецких войн (1723 г.) начался следующий этап миграции, в основном с вышеуказанных территорий, а также из районов Арцаха, Кессарии, Евдокии и др. Немаловажную роль в миграции армян, длившейся до 50-х гг. XVIII в., имело международное торговое значение Смирны, в силу которого в известной мере сдерживалась мусульманская религиозная нетерпимость в г. Смирне и в его окрестностях.